


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ****ԴՈՐԾՄԸ ԵԿԵՂԵՑԻ ՄԸ**

Քրիստոնեայ եկեղեցին էապէս հոգեւոր կազմակերպութիւն մ'է: Ան՝ ցեղային, ազգային եկեղեցական, ընկերային, վարդապետական և օրինական յատկանիշեր ալ կրնայ ունենալ: Եկեղեցին նոյն իսկ կրնայ ըսել թէ այս վերջին յիշուած յատկանիշերը իր գոյութեան համար անհրաժեշտ են, քանզի հոգի մը մարմինն մը պէտք ունի: Բայց հոգեւոր իրակաւնութիւններն էին որ Քրիստոնեայ եկեղեցին շինեցին, և տակաւին ինչ որ եկեղեցիին կողմէ կը կազմէ հոգեւոր բան մ': Օրինակով մը եթէ բացատրէինք, պիտի ըսէինք թէ երկրորդական յատկանիշերը նկարի մը չըջանալը կը կազմեն, բայց հոգեւոր կիսանքը՝ պատկերն իսկ է:

Ուէ՛ զործօն կազմակերպութիւն մը իր հոգեւոր զործը և նպատակները յառաջ կը քննէ: Բայց Մերձաւոր Արեւելքի եկեղեցին երեք վտանգներու առջև կը գտնուի, երբ այն կը փորձէ այս կատարելու:

1. Եկեղեցին կրնայ փորձուիլ չըջանալը պատկերին տեղը գնելու, և կրնայ խորհիլ թէ ոչ-հոգեւոր տարրերն են որ կը կազմեն իսկական կիսանքը: Այսպէս եկեղեցին կրնայ իր ոյժը վտանել այս երկրորդական կէտերը յառաջ տանելու և ոչ թէ հոգեւոր կիսանքը: Եկեղեցին կրնայ գործօն ըլլալ, բայց ոչ՝ հոգեւոր

բապէս ազդեցիկ:

2. Եկեղեցին ինքը կարելի է այս համոզումը չունի, բայց եկեղեցիէն դուրս գտնուող ժողովուրդը կրնայ չըջանալը պատկերին հետ շփոթել, և այնպէս թաղաւորել թէ ինչ որ գործօն և հոգեւոր եկեղեցի մը կ'ընէ պարզապէս արգիւնք մը ապահովելու փորձ մըն է, արգիւնք մը՝ որ երկրորդական նպատակներուն, չըջանալին, կը պատկանի: Հետեւաբար եկեղեցին կրնայ քննադատուիլ թէ քաղաքական կամ ոչ-հոգեւոր նպատակներու կը ձգտի: Եկեղեցին ինչ որ ընէ սխալ հասկըցուելու և հետեւաբար իր ազդեցութիւնը կորսնցնելու վտանգին մէջ կը գտնուի:

3. Այս թիւրիմացութիւնէն ինքզինքը ազատելու համար եկեղեցին երկրորդ վտանգի մը մէջ կ'ընայ, ոչ-գործօն ընթացք մը ընդգրկելով: Ան իր գործը պիտի վարէ: Անոր առանձնաշնորհումները բաց են բոլոր անոնց որոնք կուզեն օգտուիլ անոնցմէ: Բայց ան սեւէ բան մը ընել պիտի չուզէ իր գործը յառաջ մղելու կամ իրեն հետ յարաբերութեան մէջ չգտնուող մարդերու մէջ իր ազդեցութիւնը տարածելու համար: Ահա այս է վտանգը որուն մէջ կը գտնուի Աւետարանական եկեղեցին: Եկեղեցին կազմակերպութիւն մ'է, որ նպատակ մը ունի: Քրիստոս եկեղեցիէն գործունէութիւն կ'ակնկալէ: Այս երկու կէտերուն ճշմարտութեան ուէ՛ մէկը չի կասկածիր: Ուստի ինչ՞ պէտք է ընէ զործօն եկեղե-

ցի մը, Կրնայ ըստիլ թէ անոր անդամները ջերմեռանդ պէտք է ըլլան, թէ անոր պաշտառունքն իրոն մէջ աւելի մեծ թիւով մարդեր պէտք է ներկայ ըլլան, թէ ան աւետարանչական նպատակներուն պէտք է նիւթապէս լայնօրէն իր բաժինը բերէ: Բայց աւտնք միայն արդիւնքներ են: Պէտք եղած առաջին կէտը հոգևոր կեանք մ'է իւրաքանչիւր անդամի սրտին մէջ և նպատակ մը Քրիստոսի գործը և նպատակները կատարելու: Այսպիսի նպատակ մը ինքզինքը պիտի յայտնէ գործին մէջ և պիտի յառաջ բերէ որոշ ձգտումներ մտքին մէջ:

Ի՞նչ կրնայ ըլլալ այսպիսի գործօն եկեղեցիի մը գործունէութիւնը:

1) Քրիստոնէական կեանքի և փորձառութեան մասին վկայիլ՝ չայն չ'ապրողներուն, 2) Յիսուսին կեանքը ծանօթացնել՝ զայն չգիտողներուն, 3) Մեծցող մանուկներու նկարագիրը կազմել՝ Յիսուսի վարդապետութիւններուն համեմատ, 4) Յիսուսի ոգիով զժրագոյններուն օգնել, 5) Բնկերային սխալները շտկել, 6) և ծառայութեան միւս ձեւերուն մէջ հնազանդիլ Քրիստոսի Հոգիին առաջնորդութեան: Աստիք ընկու համար եկեղեցին չ'սպասիր որ մարդեր իրեն գան և իր օգնութիւնը խնդրեն: Ան ծրագրերը կը շինէ բոլոր բաներուն ոգոնք պէտք է կատարուին, և մարդերուն կը մօտենայ իր ծրագրովը, իր օգնութեամբը և նպատակովը: Ան պէտք է փնտռէ կարօտը, ան պէտք է գտնէ մոլորեալները, ան պէտք է Քրիստոսը մարդերուն տանի:

Ճ. ՄԷՐԻԼ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԵԿԵՂԵՑՈՒԿԱՆ ԲԱՐԵԿՍՐԳՈՒԹԻՒՆ

Կեանքը շարունակական փոփոխութիւններու շղթայ մը կը կազմէ: Մարդկային կեանքին մէջ ոչ մէկ բան հիմա այնպէս չէ ինչպէս որ եղած էր իր ծագումին առաջին վայրկեանին: Մինչ կեանքը կը խորունկնայ, կ'ընդլայնի, կը բարձրանայ, կը բարդանայ, տեւականօրէն նոր պայմաններ կը ստեղծուին, որոնք իրենց կարգին նոր պահանջներ կը ներկայացնեն: Մենք պէտք է կոյր եղած ըլլանք այս ճշմարտութիւնը անտեսելու համար: Այս

կը նշանակէ թէ մարդկային ունէ հաստատութիւն միշտ փոփոխելի է, թէ այն պէտք է ինքզինքը յարմարցնէ նոր պայմաններու, իթէ կ'ուզէ իր գոյութիւնը անվտանգ պահել:

Հայ կեանքի պատմութեան մէջ շատ կարեւոր էջ մը կը կազմէ ԺԹ. դարը, որուն միջոցին արեւմտեան մշակոյթի հետ շատ սերտ յարաբերութիւնը վերադարձնում մը յառաջ բերու մեր կեանքին շատ մը մարդերուն մէջ:

Հայ կրօնական կեանքը չէր կրնար չազդուիլ այս ընդհանուր շարժումին: Աւետարանական շարժումը, պէտք է նկատել իր բարենոյ ոգչական փորձ մը, հայ կրօնական կեանքի մակարդակը բարձրացնելու համար: Պէտք է խոր և անաչառ ուսումնասիրութեան առարկայ դարձնել Հայ Աւետարանականութիւնը, հասկնալու համար թէ ան ձախողած է թէ յաջողած իր նպատակին մէջ, թէ ընդհանուր առմամբ ի՞նչ եղած է անոր ազդեցութիւնը հայ կեանքին վրայ: Ունէ մէկ շարժում չկրնար անթերի ըլլալ իր ընթացքին մէջ. և Աւետարանականութիւնն ալ ունեցած է իր թերութիւնները: Բայց չենք կրնար ըսել թէ ան ձախողեցաւ, ան Հայ կրօնական կեանքին մէջ զգալի ազդակ մը եղած է, առնուազն միշտ վառ պահելով բարենորոգչական միտումները:

Այսօր մեզի համար է՛ն հրատապ և անմիջական լուծում պահանջող խնդիրն է եկեղեցական բարեկրթութիւնը: Այս պէտք է հասկնալ թէ՛ Առաքելական և թէ՛ Աւետարանական եկեղեցիներուն համար: Հայ կրօնական կեանքը ընդհանրապէս բարեկրթութիւն կը կարօտի: Բացի Աւետարանական եկեղեցիէն այսօր կը տեսնուին բարեկրթական շարժումներ տարբեր կեդրոններու մէջ, — Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքը, Մ. Նահանգներ՝ ուր կազմուած է եկեղեցասիրաց Միութիւնը և Հայաստան: Ասոնցմէ իւրաքանչիւրը կարգաւ ունի իր օրինակներ, փարոս և Աշատ Եկեղեցի պարբերականները: Երուսաղէմի Պատրիարքութիւնը արդիականացումի և բարեփոխումի, թէպէտ շատ զգոյշ և չափաւոր, միտումներ կը ցուցնէ: Անակնկալ նորութիւն մ'է տեսնել Բողոքական կղերական մը իբր Բլոք. Ժառանգաւորացի մէջ: Սիրոն իր ներկայ պարունակութեամբը կը յայտնուի թէ հակառակ չէ բարեկարգութեան: Գեր. Տ. Բ.

Եպս. Կիւլէսէրեան «Ս. Գրքին առտնին ընթերցումը» եւ «Ժողովուրդին կրօնական դաստիարակութեան բարեփոխութիւնը» իբր հիմ կը նկատէ այս բարեկարգութեան:

Ամերիկայի Եկեղեցասիրաց Միութիւնը աւելի ջիւղ ախոյեան մը հանդիսանալ կը թուի բարեկարգութեան դատին: Ան իր Փարսոզ ոկսած է պարզ աւետարանական ճշմարտութիւնները մատչելի ընել ժողովուրդին:

Հայաստանի մէջ բարեկարգութեան կուսակիցները աւելի յարձակողական դիրք մը բռնած են Հայ Եկեղեցիի հանդէպ. անոնք կա՛մած են Ազատ Եկեղեցիի Եղբայրութիւն մը, որ վայելել կը թուի Հայաստանի կառավարութեան վստահութիւնը: Այս կազմակերպութիւնը վերջերս ակսած է լուսն փրփակական տի, հաստատելով ամէն տեղ իր մասնաճիւղերը եղբայրակցող հայ եկեղեցիներու շէնքերը:

Դեռ կանուխ է լսելու համար թէ ի՞նչ արդիւնք պիտի տան այս շարժումները, որ աշխարհականներու մէջ աւելի գետին շահած ըլլալ կը թուի քան թէ՛ կղերական դասակարգին մէջ: Բայց մենք կուզենք հոս շեշտել կէտ մը:

Բարեկարգութիւնը աւելի ներքին զործողութիւն մ'է քան թէ արտաքին. այն աւելի կրօնական կեանքի փոփոխութիւնն է քան թէ անոր արտայայտութեան ձեւին: Եկեղեցական շէնքերը, պաշտամունքի ձեւերը, խորհուրդները, արարողութիւնները, երգեցողութիւնները, քարոզախօսութիւնը, ընթերցումներն ու աղօթքները եւ մեր զաւանանքները ներքին հոգեւոր կեանքի մը արտաքին ձեւերն են: Անոնք ա՛յնչափ արժէք ունին ո՛րչափ միջոց մը կրնան ըլլալ հոգեւոր կեանքը զարգացնելու: Այս արտաքին ձեւերն ալ միշտ բարեկարգութեան կը կարօտին. բայց ե՛ն բարեկարգուող ձեւերը անարժէք կը մնան երբ անոնց հետեւը հոգեւոր կեանք մը չի կայ: Բարդէն Սրբազան շատ լաւ կը յայտնէ երբ կըսէ թէ եկեղեցական բարեկարգութիւնը «միայն պարզապէս եկեղեցոյ ժամակարգական, ծիսական, կանոնադրական վարչական, հայլն, կարգուսարքին բարեփոխութիւնը» չէ՛ այլ ատկէ աւելի քան մ'է (Սխմթիւ 6, էջ 157):

Հետեւաբար այս բոլոր բարեկարգչական շարժումները եթէ կրնան հայ կրօնական

կեանքը բարձրացնել, եթէ կրնան քրիստոնէական պարզ եւ մաքուր Եոր կեանք մը յառաջ բերել, եթէ կրնան անհատները Գրիտտոսի նկարագրին փոխել յաջողած ի՞նչուն իրենց նպատակին մէջ: Բայց եթէ կը գոհանան, երբ միայն կուսակրօնութիւնը կը շնչեն, կրօնական սքեմը կը փոխեն, ժամերգութիւնները կը կրճատեն եայլն, պէտք է այն ատեն ձախողած նկատել իրենց նպատակին մէջ:

Եկեղեցասիրաց Միութիւնը մեզ կը մղէ խորհելու թէ ան բարեփոխութիւնը իր էութեամբը հասկցած է. եւ իր ողջամիտ ընթացքով պիտի կրնայ շինիչ ազդակ մը ըլլալ հայ կեանքի մէջ:

Ա.ԶԱՍ

ԿՐՕՆՔ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

(Այս յօդուածը, բացի անոր պատիկ մէկ մասէն, Բրոք. Ր. Միլլիքանի «Գիտութիւն եւ կրօն» աշուէն պրօյէրին առաջին մասէն քաղուած է:)

Մարդկային մտածումի եւ զործունէութեան այս երկու մարդերը իրարու հանդէպ միշտ ալ հաշտ չեն գտնուած: Գիտականներ չատ անգամ պախարակուած են իբր անկրօններ՝ կրօնականներու կողմանէ, իսկ վերջինները կոչուած են պարզ տգէտներ՝ գիտուններու կողմանէ: Բայց իրողութիւնը այն է որ բոլոր կրօնականները տգէտ հղած չեն, ոչ ալ բոլոր գիտունները անկրօն: Գիտութեան եւ կրօնքի միջեւ հակառակութիւնը ծագում առած է մոլեռանգ կրօնականներու եւ նեղմիտ գիտուններու աններող ոգիէն: Բրոք. Ր. Միլլիքան այս կէտին ակնարկելով կ'ըսէ. «Այս հակառակութեան պատասխանատուութիւնը պէտք է բաժնել այս խումբերուն միջեւ. ինչպէս որ կրօնքը նեղ հայեացքով մարդերու կողմանէ սխալ ներկայացուած է, նմանապէս գիտութիւնը՝ հոգեւոր արժէքները անտեսընող մարդերու կողմանէ՝ այնպէս ցուցուած է, թէ ան մարդկային կեանքին մէջ իր խաղաղիք իրական գերը չէ ըմբռնած, իր սահմանափակումները լաւ չէ գնահատած: Հէպեաթար գիտութիւնը երիտասարդութեան վրայ անհաստատ, անկրօն եւ երբեմն ալ անբարոյական ազդեցութիւն մը թողուցած է: Երկու խումբերն ալ, կրօնական եւ գիտնա-

կան, էապէս էլը ներկայացնեն մտքի նոյն տիպը, մտաւորական զարգացումի նոյն աստիճանը: Իւրաքանչիւրը՝ Ս. Գիրքը կը մեկնէ տառացիօրէն և ո՛չ պատմականօրէն, մէկը պաշտպանելու, իսկ միւսը չայն զատապարտելու համար: Մէկը բացարձակապէս անծանօթ է գիտութեան, իսկ միւսը կատարելապէս տգէտ՝ կրօնքի մասին:»

Կրօնքի և գիտութեան մէջ իրական հակադրութիւն մը չի կրնար զոյ ըլլալ, պարզապէս անոր համար որ ճշմարտութիւնը չի կրնար ինքն իրեն գէժ բաժնուիլ. այս երկուքը նոյն ճշմարտութեան լրացուցիչ մասերն են: Մէկու մը կրօնքը և գիտական ծանօթութիւնը երբ իրարու հակասական են, այս կը նշանակէ թէ մէկուն կամ միւսին վրայ սխալ գաղափար մը ունի: Աշխարհիս է՛ն հռչակաւոր գիտուններէն շատեր միեւնոյն ատեն ջերմ քրիստոնեաներ եղած են: Խօսքը տանք Միլիքանի. «Ամէն մարդ կ'ընդունի թէ 1650 էն մինչև 1920 Անգլիական մեծագոյն գիտունները եղած են Նևտոն (1640), Մաքսուէլ (1870), Ֆարատէյ (1837), Բէլլին (1890), Բալէ (1889 ին մեռած). ունէ ատեն և ունէ մէկ տեղ չկայ ճշմարտութեան աւելի՛ ջերմաստիճանի փնտռողներ, աւելի՛ թափանցող տեսողութեամբ օժտուած միտքեր քան յիշուածները, բայց որոնցմէ իւրաքանչիւրը նոյնչափ ջերմեռանդ հաւատացեալ մը եղած է: Առաջին անգամ Բէլլին էր որ երկրիս տարիքը իր մէկ միլիոն տարիներ հաշուց, և հակառակ Ծընընդոցի առաջին գլուխներուն ան երբէ՛ք հակադրութիւն մը չգտաւ իր եկեղեցիին անդամակցութեան, որ մինչև իր մահը տեսչ, և իր այս դամափառին միջև: 1887 ին, երբ ան իր կախողութեան է՛ն բարձր կէտին հասած էր, գրեց. «Ես կը հաւատամ թէ քանի գիտութիւնը կ'ուշադրուի իւր իւր աստիճանով, ա՛յնչափ աւելի հեռու կը տանի մեզ առաւելածութիւնէ»: 1903 ին մեռնելէն քիչ առաջ ան գրեց. «Եթէ դուն պէտք եղածին չափ խորհիս գիտութիւնը քեզ պիտի ստիպէ հաւատաւոր Սատոնոյ, որ լոյսը կը ընդհատուի վայն կրօնքին ոչ թէ թշնամական այլ օգտակար պիտի գտնես»: Լուի Փասթէօր, առաջնակարգ Ֆրանսացի և բոլոր հիմնադրանքներու պետը, խորունկ կրօնական մարդ մ'էր: Իր տապանաքարին վրայ գրուած է իր հետեւեալ

խօսքը. «Երջանիկ է այն մարդը որ իր մէջը Աստուած մ'ունի, գեղեցկութեան գաղափարական մը, որուն կրնայ հնազանդիլ, գաղափարական մը՝ արուեստի և գիտութեան, գաղափարական մը՝ հայրենիքի, գաղափարական մը Աւետարանի գեղեցկութիւններուն»:

Ներկայ ապրող ամերիկեան գիտուններէն է՛ն հռչակաւորները քրիստոնեաներ են, որոնցմէ տասնեակ մը կը յիշէ Միլիքան իր ճառին մէջ: Տօքթ. Ջարլս Տ. Ուալքօթ, որ Մ. Նահանգներու մէջ իր գիտնական է՛ն աչքառու գիրքը կը գրաւէ և որ բնաշրջումի ջերմ պաշտպաններէն մէկն է, միեւնոյն ատեն եկեղեցիի զործօն մէկ պաշտօնեան եղած է միշտ: Զ. Փ. Օսպօրն, Նիւ-Եօրքի բնական Պատմութեան Սմերիկեան Թանգարանի տնօրէնը, նոյնպէս հռչակաւոր կրօնական մ'է եղած: Միքայէլ Փուփին, Ամերիկայի առաջնակարգ էլիտրագէտը, Ճ. Քուլլըր, Ամերիկեան լուսաբանել յու պետը, Ճ. Անկէլ, Եէյլի նախագահը և հռչակաւոր հոգեւորներ, Ճ. Ա. Պրէսթօն, Ամերիկայի է՛ն նշանաւոր հնախօս գիտունը, Թ. Ս. Ջեյմսըն, Ամերիկեան երկրաբաններու պետը, Ք. Կ. Էպլթ, նշանաւոր աստղագէտը, և իրենց պէս ուրիշ շատ մը գիտուններ եկեղեցիի ջերմ պաշտպաններ և հաւատացեալներ են:»

Կրօնական մեծ գէժքերը, Ս. Օգոստինոսէն սկսեալ, գիտութեան հանդէպ երբէք հակադրութիւն գիրքին մէջ չեն գտնուած: Օգոստինոս կրօնական առաջնորդները զո՛ւշացուցած է կրօնքը ծիծաղելի շնորհայտներու համար, չայն գիտութեան հակառակ ցուցնելով: Ապա Միլիքան կը յիշէ յայտնի կրօնականներու շարք մը, այս կէտը փաստելու համար: Ուէսլի, միթոսական եկեղեցիի հիմնադիրը, «Ընդհանուր Ակնարկ մը Աստուծոյն Ստիճանական Զարգացումին վրայ» յօդուածովը թունդ բնաշրջական (EVOLUTIONIST) մը կը յայտնուի: Հէնրի Տրամբս, Հէնրի Ուօրտ Պիչըր, Լայմըն Էպլթ, Ֆօլտիք, Սօր, Քինկ և Պրատըն, Պըրթըն և Մէթհիլ և իրենց պէս բնաշրջական հայեացքի և խորունկ փորձառութեան տէր մարդիկ զիստրիւնը և կրօնք իր ներդրեանի փոքր նկատած են, որոնք ազդուօրէն կը գործակցին աշխարհը առաջնորդելով դեպի կեանքի յաւաքոյն սրբեմանները:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՒՆԵՐ

Տօք. Րիտ, Պրոֆիլին մէջ մէծ եկեղեցիի մը հովիւը, իր կնոջ հետ Հալէպ այցելութեան առթիւ, Ազիյի Աւետ. եկեղեցիին մէջ քարոզեց: «Շատ մը աւետարաններ դուռն են», ըսաւ ան, «Որոնցմէ միայն չորսը ունինք մեր կանոնական Ս. Գիրքին մէջ: Սնոնցմէ ամէն մէկը Յիսուսը կը ներկայացնէ իր տեսածին, իր հասկացածին և իր նպատակին համեմատ: Ամէն մէկ Քրիստոնեայ անհատ, նոյնպէս, կը գրէ կենդանի աւետարան մը իր առօրեայ կեանքովը: Հայերը սկսած են նոր էջ մը բանալ իրենց պատմութեան մէջ. անոնք իրենց տառապանքովը կը գրեն կենդանի աւետարանը յոյսի և հաւատով»:

Կ. Պոլսոյ և Մարտիի միջև տարածուող Միջլրկրականի ափիւսն չ'ըայ 102 յարանուանութիւններ կը գտնուին, որոնց մէջ գործող Միսիոնարները կ'աշխատեն Հիւսիսային Աֆրիկի և Արեւմտեան Ասիոյ Միսիոնարական Միութիւնը: Նոյ. 1-15 ին Միսիոնար իր տարեկան ժողովը կատարեց Հալէպ: Տօք. Ր. Փ. Ուայլտըր, Միութեան նախագահը և Քրիստոնեայ Ուսանողական շարժումին հիւնադիրը և առաջնորդը, Ալիւիէի եկեղեցիին մէջ խօսեցաւ, «Շարժումներ Ուսանողներու մէջ» նիւթին շուրջ, որուն ամփոփումը պիտի տւըրուի նոր Աւետարանի յաջորդ թիւին մէջ:

Մ. Ա. Նպաստամաս ուց Միսիոնարական նախաձեռնութեամբ կ'աշխատեն է չորս անձերէ բաղկացեալ մասնախումբ մը, որ Կիրակնօրեայ Դպրոցի չորս բաժիններուն (6-18 տարեկան դպրոցականներուն) համար դասապիւրքեր պիտի պատրաստէ: Մասնախումբին անդամներն են՝ Միսիոն. Մէլիլ, Օր. Սրաքսի Պօտուրեան (Սթէնք), Տիար Բիւզանդ Եղիաւեան (Մէլիլ ամբիւստ Սթէնք), և Մր. Փալթրիճ: Այս դասապիւրքերը կը պատրաստուին այնպիսի կերպով մը որ Հայ Կեանքի պայմաններուն յարմարին և հոգածելի ըլլան թէ՛ Առաքելական և թէ՛ Աւետարանական Կ. գրաբնութիւններուն մէջ: Այս խիստ կարեւոր ձեռնարկին համար կատարեալ յաջողութիւն կը մաթենք:

Ազիյի Հայ Աւետ. եկեղեցիին Ե. Բ. Զանից Միութիւնը տաեղնագործելու յուցահանդէս մը սարքեց եկեղեցիին վարի սրահին մէջ:

Տիկիններու պատրաստած անուշեղենները և խմորեղէնները, ուրոք սիրայօժոր նուէրներ էին, աւելի փայլ տուին հանդէսին: Զուտ հասոյթը, որ պիտի յատկացուի եկեղեցիի շէնքին պակասները լրացնելու, 42 Օսմ. սուկի եղած է: Բոլոր ձեռագործները Միութեան օրհորդներուն կողմանէ պատրաստուած եւ նուիրուած են:

Սոյն Միութեան նախաձեռնութեամբ բաշխուած է գիշերային դասախօսութիւններու շարքը: Նոյ. 16 ին Տօքթ. Պ. Յովնանեան խօսեցաւ ճահճատենդէ ազատ մնալու միջոցներուն վրայ: Հոժ բաշխութիւն մը հետաքրքրութեամբ վայելեց այս օգտաշատ դասախօսութիւնը: Նոյ. 23 ին խօսեցաւ Մանչերու Բարձրագոյն Վարժարանին ուսուցիչներէն Տիար Փօլ Տէր Պօղոսեան, որ իր ուսումը Զուլայերիւ լրացնելէ վերջ մի քանի ամիս առաջ հոս եկած էր. նիւթն էր «Եւրոպական Մշակոյթը և Մենք»: Ժողովուրդը շատ հետաքրքրուեցաւ և զոհ տպաւորութեան տակ լրամոռեցաւ:

Ուրֆայի Աւորիները Պաղտատի կայանին մօտ, Հալէպ, բնակութիւն հաստատած են, կազմելով նոր քարաշէն քաղաքամաս մը:

Գաւաթին մէջ, որ մօտաւորապէս 500 տուններէ կը բաղկանայ, երեք եկեղեցիներ կան, հին Ուղղափառ Աւորի, Կաթոլիկ և Աւետարանական: Վերջինը, հալիւ 20 տուն, օծուած է գիւղեցիկ շէնքով մը, որ կրնայ 200 հոգի պալունակիլ: Բոլոր Աւորիները անխտիր ներկայ կըլլան Կիրակնօրեայ և միջշաբթոյ պաշտամունքներուն:

Վեր. Կ. Յ. Յարութիւնեան և Մր. Փարթրիճ հովեական այցելութիւն կատարեցին Նոյ. 19-24 ին: Իսկէնտէլունի մէջ կատարած են հինգ պաշտամունքներ, 7 մանուկներ մկրտած, Ս. Հաղորդութիւն մատակարարած, 3 նոր անդամներ ընդունուած, քարոշներ տըւած, եւ պսակ մը կատարած են: Ապա այցելած են Փարթլը, մաքրակրօն գիւղը և Պէլլան, որոնց մէջ մէկ մէկ պաշտամունք կատարելէ վերջ Գլըբլիւն անցած են. հոս եղած է գիշերային պաշտամունք մը հոժ բաշխութեան մը ներկայութեան և ապա պսակ մը կատարած են: Այս այցելութիւնը ամբողջին վրայ շատ հաճելի տպաւորութիւն մը ձգած է:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՐԹՔ

Կիրակի. Յարգել Տիրոջ Օրը (Մատթ. 12. 8-14): Ո՛վ մարդ, Կիտե՞ս թէ Հօրդ քով որչափ արժէքաւոր ես: Ան՝ եօթներորդ օրը քեզի համար հաստատեց և նուիրապործեց: Ինչպէս կը զործածես զուն այս օրը:

Աղոթք. Ո՛վ Աստուած, մեր հայրը, կը խնդրենք որ հոգիդ այսօր նորոգէ և մաքրէ մեր սիրտերը: Հոգիով հաղորդակից ըլլանք քեզի: Շնորհէ որ Քու տունդ և հոն կատարուող պաշտամունքները մեր հոգիներուն օրհնաբեր ըլլան: Յիսուսի Անունով: Ամէն:

Երկուշաբթի. Յիսուս մեր փառապետը (Յովհ: 13. 1-5 և 12-15): Յիսուս ուսուցիչ է: Ան սորվեցուց իր խօսքովը և կեանքովը: Սյս համարները կը յայտնեն, թէ մեծութիւնը կը կայանայ խոնարհութեան և ծառայութեան մէջ: Զանաւոր ճշմարտութիւնը փորձով սորվելու:

Աղոթք. Ուրումած Հայր, շնորհէ մեզի քաջութիւն, հաւատք և սէր, Քու լոյսդ թէ խօսքով և թէ կեանքով բոլորին տանելու համար: Յիսուսի անունով կը խնդրենք: Ամէն:

Երեքշաբթի. Քրիստոսի մեջ Մխիթարաբիւնը (Փիլ. 2. 1-12):

Յիսուսի դիմէ ոյժ առնելու համար՝ եթէ տկար ես, արդարամտութիւն սորվելու համար՝ Լթէ ուժով ես, խոնարհութիւն սորվելու, կարօտը հոգալու, ճնշելալին և անիրաւեալին՝ օգնելու՝ Լթէ տաղանդներու տէր ես:

Աղոթք. Ով Աստուած, զուն որ միշտ օգնելու պատրաստ ես, լուծէ և սովորէ բոլոր սիրտերը, որ չուրկ են մարդկային ոնէ սէրէ, վիրաւոր են և տխուր: Շնորհէ որ ես միշտ մը ըլլամ Քու ձեռքիդ մէջ հոգի մը ուրախացնելու համար: Փառք անունիդ: Ամէն:

Չորեքշաբթի. Սասուն՝ Հոգիի մեջ (Յիս. 3. 14-21): Բարեկամ, երբէք փորձառութեամբ ըրդ սորված ես, թէ ի՞նչ մեծ հոգեւոր ոյժ կայ՝ Աստուծոյ քու հոգիիդ մէջ՝ Ս. Հոգիի միջոցաւ՝ բնակելուն մէջ: Դուն երբէք խորհած ես Աստուծոյ անքննելի սիրոյն վրայ, և այդ սիրոյն միջոցաւ մեր վրայ եկած օրհնութիւններուն վրայ: Եթէ մինչև հիմա չես փորձած, ամենուս Հօրը առջև ծուներ դիր, Ան քեզի պիտի սորվեցնէ:

Աղոթք. Ո՛վ Աստուած, զուն՝ որ Քեզ սիր

րողները և օգնութեան համար Քեզի գիմողները կ'օրհնես, սրբէ մեր մարմինը, միտքն ու հոգին, և մաքրէ մեր խիղճը, որպէսզի կարենանք Քեզ աւելի լաւ հասկնալ: Ամէն:

Հինգշաբթի, Փատարամեցիք Տիրը (Մատթ. 105. 1-5): Մեզքը ամէնէն աւելի մեր յիշողութեան կը վնասէ: Այս պատճառաւ մենք շատ շուտ կը մոռնանք Աստուծոյ շնորհքները: Մենք պէտք է չգուչանանք ապերախտ ըլլալէ: Մենք պէտք է ամէն օր Աստուծոյ շնորհքները մեր ազօթքին մտածումին առարկայ ընենք:

Աղոթք. Ամենակարող Աստուած, փառք կու տամ քեզի այս նոր օրուան համար: Մեր բոլոր օրերը քու կողքին: Շնորհէ որ մենք կարենանք այս օրը զործածել այնպէս ինչպէս որ Դուն կ'ուզես: Շատ անգամ տրտունջով և դանդաղով անցուցինք մեր սե օրերը: Ներէ՛ մեզի: Մեզ զօրացու՛ր որ կարենանք ապագայ փորձանքներուն դիմանալ, փառք քեզի քու շնորհքիդ համար: Ամէն:

Ուրաւ. Նկարագրի կրօնաբիւն (Ղուկ. 3. 10-14): Ի՞նչ ընենք: Ուղղամտութեամբ և արդարութեամբ աշխատինք: Մեր առողջութիւնը զործածենք զործելով շահելու և բարիքի համար: Աստուծմէ ոյժ խնդրենք մեր անձերը բարեփոխելու համար: Յառաջանա՛ք ոյժով և խոնարհութեամբ: Մեր նկարագրի կազմանք Աստուծոյ կամքին համեմատ:

Աղոթք. Ո՛վ Տէր, շնորհէ որ ես Քեզի աւելի՛ նմանիմ, աւելի՛ առատաձեռն և անձնուրաց ըլլամ, խորհելու և խօսելու և կեանքի մէջ: Քու փառքիդ համար: Ամէն:

Շաբաթ. Կեկաց Ճաւերան (Մատթ. 7. 13-20):

Քրիստոնեայ ըլլալ փառաւոր բան մ'է, բայց զիւրին չէ: Քրիստոնեան պէտք է քալէ անձնաւորհութեան, ժուժկալութեան, նախաաւելի և հաւանքի ճամբայէն, բայց ան կ'առաջնորդէ գէպ ի խաղաղութիւն և կեանք: Իսկ լայն է ան ճամբան, որ գէպ ի մահ կը տանի:

Աղոթք. Ո՛վ Տէր, օգնէ որ զաւակներունդ պէս ապրինք: Շնորհէ որ, նկատելով Քեզի հետ ունեցած մեր յարաբերութիւնը, կարենանք միւր արժանապատուութիւնը պահել: Յիսուսի սիրոյն կը խնդրենք: Ամէն:

ՈՒՇԵՆԴՈՒԹՅՈՒՆ—Թիւ 4 հանելուկի ցերէն մին՝ օ պէտք է ըլլայ:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԵՐ

ԵՍՍՅԻ ԿՐ ԽՐԱՏԷ ՍԶԳԻՆ ՊԵՏԵՐԸ

Դեկտեմբեր 11

Քաղաքական Կառույթին. Իսրայել և Սուդանի երկիրը պատերազմի չըջանի մը մէջ կը գտնուին. միակ հարցն էր թէ ի՞նչ պէտք է ընել Ասորեստանեան յարձակումի մը առթիւ:

Եսայիի Պատգամները. 1) Ասպարա Թագաւորին (7.2). Եսայի՝ թագաւորին կը զրկուի որպէսզի ան չվախնայ (7.4), քաւի թշնամին չպիտի յաջողի (7.7): Թագաւորը հաւատ չընծայիր, որուն Սուրբոյ և Իսրայէլի մօտաւոր կործանումի մասին նշան մը կը տրուի (7.13-16): և Յուդայի ապագայ կործանումը կը նախագայարարուի (7.17, 25): 2) Քաղաքական Առաջնորդներուն. Այս պաշտօնեաները երուսաղէմը պաշտպանել երազելին: Եսայի քննադատեց եղիպատոսէ օգնութիւն ստանալու ծրագիրը (31.1): Եհովա արդէն յայտնած էր թէ այս անիմաստ է (8.9-14): Երուսաղէմը ինքը պիտի պաշտպանէ (31.5): Անիրիսօքը ետ պիտի չ'առնէ (31.2): Եսայի կրկնեց թէ Ասորեստան պիտի կործանի (31.6-9): 3) Եզեկիա Թագաւորին (36.37 զլուխներ) Եզեկիայի ժամանակին բոլոր Յուդայի երկիրը բանակներու կողմանէ ոտնակոխ եղած էր, երուսաղէմ երկու անգամ վտանգի ենթարկուած էր (39.26-37.8-10): Թագաւոր և մարգարէն բոլոր ժողովուրդը հրաւիրեցին վստահիլ Աստուծոյ (36.14-19, 18), մինչ Ասորեստանեան կառավարութիւնը իր բոլոր ուժովը կ'աշխատէր ջլատել ահոր բարոյական կորուստը և արդիւնէլ գայն Աստուծոյ վստահիլէ (36.11, 13): Շուսահատական վայրկեանին Եզեկիա սկսաւ աղօթքի (37.1 և 37.14-20). և մարդիկ զրկեց որ Եսային ևս աղօթելու մղեն: Եսայի սա պատասխանը զրկեց, «Եհովա կընդունի որ Սենեքերիմի խօսքերը իրեն գէժ են (37.6), գայն ետ պիտի կանչէ իր երկիրը, և հոն պիտի սպաննէ (37.7): Երուսաղէմի փրկութեան մասին մարգարէութիւնը կը կրկնէ (37.33-35):

Հարցումներ. 1) Կը հաւատա՞նք թէ քաղաքական գէպքերը հոգեւոր պատճառներ ունին: 2) Կընդունի՞ք թէ Աստուած աղօթքի կը պատասխանէ: 3) Համոզուա՞ծ ենք որ Աստուած կը կառավարէ աշխարհը: 4) Այս համոզումները ապրելու պատրա՞դատ ենք:

ՔԱՂՈՒԱԾՔ

Դեկտեմբեր 18

Վերջին տասնամէկ դասերուն մէջ հինգ մարգարէները ուսումնասիրեցինք, որոնք էին Եզիա, Ամովս, Ովսէէ, Միքիա, Եսայի: Առնեց զործունէութիւնը կը բոլորէ 200 տարուայ շրջան մը, սկսեալ Աքաաթ թագաւորէն մինչև Եզեկիա (Ք.Ա. 918-697): Այս երկու դարերու մեծ հարցերն էին, 1) Իսրայէլի թագաւորներուն ջանքը Եհովայի պաշտամունքին տեղ Բաաղի պաշտամունքը ընդունելու իրրազգային կրօնք, 2) Ասորեստանեան ճամբի աւական վտանքը: Եզիա, Եզիսէ, մարգարէական դպրոցներ, Եհովա զինուորը, և Յովիադա քահանան առաջին խնդիրը լուծեցին, պարտութեան մատնելով Բաաղի պաշտօնները: Միւս չորս մարգարէները յայտարարեցին թէ Իսրայէլի և Յուդայի Ասորեստանի կողմանէ վտանգի մէջ դրուելուն պատճառները բարոյական կրօնական էին, և թէ փրկութեան միակ յոյսն է բարոյական և կրօնական բարեփոխումը: Իսրայէլ մերժեց այս և կործանեցաւ, Յուդա Եհովայի դարձաւ և ազատեցաւ: Այս մարգարէները ըսին թէ ժողովուրդի մը բարգաւաճումը կախում ունի կրօնքէն, այսինքն Եհովայի հաւատարմութենէն, և ոչ թէ պետական քաղաքականութենէն. թէ կրօնքը առանց բարոյականութեան, այսինքն առանց Եհովայի Օրէնքին հնազանդելու, ճշմարիտ կրօնք չէ:

Սամուէլի ժամանակէն սկսեալ (Գ. Թագ. 3.21) մարգարէները հրէական պատմութեան մէջ կարեւոր ազդակ մ'էին: Օրէնքը՝ Աստուծոյ յայտնեալ կամքը կը ներկայացնէր իր ժողովուրդին համար: Մարգարէները կը ներկայացնէին կենդանի ներշնչումը, չարունակ ժողովուրդը հրաւիրելով դառնալ Եհովայի եւ լրացնելով Օրէնքը: (Ովս. 8 12, Միքիա 2.6, Եսայի 5. 24, 8. 19 և 20) Բայց ժողովուրդը չէր ուզէր մօրիկ ընել ո՛չ Օրէնքին, ո՛չ ալ մարգարէներուն:

Այս դասը պատրաստելու ատեն պէտք է նախկին տասնամէկ դասերուն վրայ ակնարկ մը ձգել: Ի՞նչ էր Եզիայի պատգամը: Եզիան ի՞նչ բան սորվիլ ստիպուեցաւ: Ուսումնասիրէ միւս մարգարէներու կանչուիլը: Ի՞նչ էր գլխաւոր պատգամը Ամովսի, Ովսէէի, Միքիայի, Եսայիի:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

Համեղուկ Սր. Գրիգ. 2.

Սաղմոսաց զերթէն զտնել նախագաւառ-
թիւն մը որ 50 զիր կը պարունակէ:—

Որուն 39. 3. 41. Յակոբի որդիներէն մին:

» 20. 49. 10. 23. 9. 19. 40. 31. Յակոբի
որդիներէն մին:

» 24. 11. 47. 30. 33. 26. Յակոբի որդի-
ներէն մին:

» 39. 18. 28. 1. 35. Թաղաւորի մը տնունը

» 20. 21. 20. 40. 48. 16. 31. մեծ քա-
ղաք մը:

» 18. 13. 21. 17. 21. 25. լիռ մը:

» 20. 21. 22. 22. 21. 20. 20. 21. նշա-
նաւոր աւագակ մը:

» 3. 9. 12. 18. 21. 47. ա զիրն են:

Համեղուկ 3.

Ք ին վրայ 3 զիր՝ ու կ'ըլլայ 30: Կրնա՞ն:

ԿՍՐԻՊԱԼՏԻ ԵՒ ԳԻՒՂԱՅԻՐ ԳՍՈՆՈՒԿԸ

Սա հաճելի պատմութիւնը կը պատմուի
Զօր. Կարիպալտի, Իտալացի մեծ հայրենա-
սէրին, մասին: Իրիկուն մը այն Սարտենիա-
ցի հովիւի մը հանդիպեցաւ, որ իր հօտէն
զառնուկ մը կ'որսնչուցած էր, և շատ կը
տիրէր զայն չկարենալ զտնելուն համար:

Կարիպալտի շատ հետաքրքրուեցաւ այս
մարդով, եւ իր սպաներուն առաջարկէր բո-
լոր լիւնները պտտել կ'որսուած զառնուկը զըտ-
նելու համար: Զինուորները պատրաստուե-
ցան, ջահեր բխուեցան և փախստականը

Համեղուկ 4.

Հետեւեալ զրերով հայերէն նախագաւառ-
թիւն մը կազմէ 4 բառէ բաղկացեալ:—
է, ց ց ց, ւ ւ ւ, ա ա ա ա ա ա ա, ն ն ն ն
ն ն:

Այս հանելուկին երեքն ալ շիտակ լուծող-
ներէն միայն (վիճակով) փոքրիկ նուէր մը պի-
տի զրէութի « Նոր Աւետարեւր » ի նշան:

Պատասխան թիւ 1. Հանելուկին

Մաս—թե—ոս

Շիտակ լուծողներն են՝

- | | |
|---------------------------|-------|
| 1. Իսկէնտէր Մ. Մաթօսեան, | Հալէպ |
| 2. Ժօրճ Պ. Թիւթիւնեան | » |
| 3. Մուրէն Չ սփիւհեան | » |
| 4. Թորոս Գ. Լօշխաճեան | » |
| 5. Լուլու Կ. Յարութիւնեան | » |
| 6. Հոռթ Յ. Զէրչիեան | » |
| 7. Հայկանոյշ Յ. Զէրչիեան | » |

զտնելու համար Լուսնիկայից ճամբայ ելան:
Բայց իւրեր, բոլոր զինուորները կամաց կա-
մաց պարապ ձեռքով ետ դարձան:

Հետեւեալ առտուն Կարիպալտի սպասու-
ւորը զօրավարը՝ իր սովորական ժամէն շատ
վերջ՝ տակաւին անկողինը խոր քունի մէջ
գտաւ: Ծառան վերջապէս զայն արթնցուց,
զօրավարը իր աչքերը շփեց և ապա իր վեր-
մակին տակէն կ'որսուած զառնուկը զորս
հանելով հրամայեց իր ծառային որ զայն հո-
վիւին տանի: Կարիպալտին բոլոր զիշէրը չո-
հած էր զառնուկը զտնելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Դործօն Եկեղեցի մը ՏՈՒՔ. Ճ. Է. Մէրիւ
ԹՕԴՈՒՄԾՆԵՐ՝

Եկեղեցական Բարեկարգութիւն ԱԶՍՏ
Դիտութիւն և Կրօնք ԲՐՈՅ. ՄԻԼԻՔԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹՔ

Կ. ԴՊՐՈՑԻ ԴԱՍ

ՄԱՆԿԱՆՑ ԻԶԸ

ՆՈՐ ԱԻԵՏԱՐԵՐ

Կրօնարարոյական, Գիտական, Կրթա-
կան Երկչարաթաթերթ:

Արտօնատէր, Վեր. Կ. Յարութիւնեան
Պատասխանատու-Տնօրէն, Տ. Ճ. Խըրլոքեան

ԲՍԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Ընդիւյ համար տարեկան 2 մէճիտ
Արտասահման » » 1 տուար

Հասցէ—

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287
ALEP, SYRIE